Հավելված 5

ՇՄԳԸԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ 2019-6 ծածկագրով

ընթացակարգի հրավերի

ԼԱԲՈՐԱՏՈՐ և ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N *ՇՄԳԸԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ 2019-6-3*

ք. Գյումրի «28» 03 2019թ.

<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ -ը , ի դեմս տնօրեն Արտուշ Ասատրյանի, որը գործում է<<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Կենդանի Լույս>>ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Իվանյանի , որը գործում է <<Կենդանի Լույս>>ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

1.2 Վաճառողը Ապրանքը մատակարարում է ք. Գյումրի, Սարուխանյան 1 հասցեով:

1.3 Գնման առաջարկում ներկայացված գինը պետք է ներառի բեռնափոխադրման, բեռնաթափման արժեքը, հարկերը, ապահովագրությունը և հնարավոր այլ ծախսերը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ___5_ օրից ավելի,

2.1.8 Հանել՝ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 210700(երկու հարյուր տասը հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև ___0_____ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[2]:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված _____ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[3]:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ____2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __3__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

---

[4] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[5]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[6]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[7]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

---

[5] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[8]

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<< Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն >> ՓԲԸ	<<Կենդանի Լույս >>ՍՊԸ
հասցե ք.Գյումրի,Սարուխանյան 1	Ք. Գյումրի, Աթաբեկյան 139տ.
հեռախոս /312/5 -65- 17	Հեռ. (0312 5 -31-01 , 093 – 955 -669)
էլ.հասցե c-familymedicine@mail.ru	էլ. Հասցեն artur.ivanyan.71@mail.ru
ՀՎՀՀ 05500891	ՀՎՀՀ 05534453
Հ/Հ163128117617 Հայէկոնամբանկի Գյումրու մ/ճ	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Գյումրի մ/ճ Հ/Հ 20501220037121001
Տնօրեն Ա.Ասատրյան	Տնօրեն Ա. Իվանյան
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

[8] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել << օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 28 » 03 2019 թ. կնքված
ՇՄԳԲԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ 2019-6-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորագինը/<< դրամ	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման				
									հասցեն	ժամկետը** ենթակա քանակը			
										1-ին եռ.	2-րդ եռ.	3-րդ եռ.	4-րդ եռ
11	33211110/2	Մեդիասքրին MediScreen 10/Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիտների, ուռոլոբինիգենի – բիլիռուբինի որոշման թեսթ ստրիպների հավաքածու		Մեդիասքրին MediScreen 10 - մեզի մեջ գլյուկոզայի /Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիտների, ուռոլոբինիգենի – բիլիռուբինի որոշման թեսթ ստրիպների հավաքածու կամ համարժեք: Մեթոդ-ինդիկատորի գունավորում: Ֆորմատ-100թեսթ x 5 ,պահպանման պայմանները 2-3 oC, Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:	հատ	80	40000	500	ք.Գյումրի, Սարուխանյան1		500		
12	33211120/2	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու		գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու : Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար - Մեթոդ կոլորոմետրիկ : Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ՝ ոչ պակաս քան 100թեստ և ոչ ավել քան 200թեստ + ստանդարտ : Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ, պլազմա: Պահպանման պայմանները՝ ռեակտիվները 2-8 C: Գլյուկոզայի	հատ	23	11500	500	ք.Գյումրի, Սարուխանյան1		500		

				հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը ՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը :Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:									
13	33211130/2	Խոլոստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ - հավաքածու/		Խոլեսթերինի /Ընդհանուր / որոշման համար նախատեսված հավաքածու CHOLESTEROL : Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար: Մեթոդ կոլորոմետրիկ : Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը՝ , ոչ պակաս քան 100թեստ և ոչ ավել քան 200թեստ + ստանդարտ:Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը ՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր): Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը : Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:	հատ	35	52500	1 500	ք.Գյումրի, Սարուխա նյան1		1500		

				Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:									
14	33211140/2	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր –ուղղակի բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու/		Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր –ուղղակի BIL DIRECT և BIL Total հավասար քանակությամբ բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու / - Մեթոդ կոլոնոմետրիկ: Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար :Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ,պլազմա: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը (օրինակ՝ ոչ պակաս քան 30թեստ և ոչ ավել քան 100թեստ +ստանդաչտ: Բիլիռուբին հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ IS013485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	60	6000	100	ք.Գյումրի, Սարուխա նյան1		100		
15	33211150/2	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ-հաավաքածու		Միզանյութի որոշման համար նախատեսված հավաքածու UREA՝ : Մեթոդ կոլոնոմետրիկ: Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար; Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ, պլազմա : Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը՝ ոչ պակաս քան 30թեստ և ոչ ավել քան 100թեսթ +ստանդարտ: Միզանյութի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման	հատ	84	16800	200	ք.Գյումրի, Սարուխա նյան1		200		

				ձեռնարկով նախատեսված նյութերը՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութե: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք									
16	33211160/2	Կրեատինին CREA-Col /Կրեատինինի որոշման թեսթ-հավաքածու		Կրեատինին CREA-Col որոշման համար նախատեսված հավաքածու: Նախատեսված Ստատ ֆաքս սարքի համար :Մեթոդ կոլոնոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ, պլազմա : Մեկ ռեագենտի հավաքածոյում թեստերի քանակը՝ ոչ պակաս քան 30թեստ և ոչ ավել քան 100թեսթ +ստանդարտ: Հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութե: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար	հատ	14	2800	200	ք.Գյումրի, Սարուխա նյան1		200		

				առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք									
17	33211190/2	Ցոլիկլոն անտի-A /արյան խմբի II որոշման թեսթ/		Ցոլիկլոն հակա-A /արյան խմբի որոշման թեսթ/ մոնոկլոնար արյան խմբային ռեագենտ: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Մեթոդ հեմագլյուտինացիա : Ստոգվող նմուշ արյուն: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	5	1000	200	ք.Գյումրի, Սարուխա նյան1		200		
18	33211200/3	Ցոլիկլոն անտի-B/արյան խմբի III որոշման թեսթ/		Ցոլիկլոն անտի-B/արյան խմբի որոշման թեսթ/ մոնոկլոնար արյան խմբային ռեագենտ: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար: Մեթոդ հեմագլյուտինացիա : Ստոգվող նմուշ արյուն: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	5	1000	200	ք.Գյումրի, Սարուխա նյան1		200		
19	33211220/2	Ցոլիկլոն անտի- Սուպեր / rh D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ		Ցոլիկլոն անտի- Սուպեր / rh /արյան խմբի մոնոկլոնար արյան խմբային ռեագենտ: Նախատեսված է արյան խմբի և ռեզուսի որոշման համար:	հատ	11,25	2250	200	ք.Գյումրի, Սարուխա նյան1		200		

				Մեթոդ հեմագլյուտինացիա : Ստոգվող նմուշ արյուն: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:									
20	33211230/2	Ռ-ՊՈՌ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեսթ-հավաքածու/		Ռ-ՊՈՌ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեսթ- հավաքածու/ Մեթոդ ՝ագլյուտինացիա, սիֆիլիսի որոշման որակական և քանակական տեստ:1հատ տուփում / 100թեսթ,ֆորմատ + ստանդարտ / x 2 : Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ, պլազմա, մեզ: Հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը :Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	117	35100	300	ք.Գյումրի, Սարուխա Նյան1		300		
21	33211240/2	Ռ—մատոիդ ֆակտոր Լատեքս Rematuoid factor-lex /Ռ—մատոիդային ֆակտորների որոշման թեսթ-հավաքածու/		Ռևմատոիդ ֆակտոր Լատեքս Rematuoid factor-lex /Ռևմատոիդային ֆակտորների որոշման թեսթ-հավաքածու ՝ որակական և կիսաքանակական որոշման : Մեթոդ՝ լատեքսային ագլյուտինացիա սլայդ մեկ հատ տուփում N 100թեսթ:	հատ	47,5	4750	100	ք.Գյումրի, Սարուխա Նյան1		100		

				Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:									
22	33211250/2	U-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex /C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ-հավաքածու/		U-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex /C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ-հավաքածու/ ռեակտիվ սպիտակուցի որակական և կիսաքանակական որոշման թեստ հավաքածու: Մեթոդ՝ լատեքսային ագլյուտինացիա սլայդ մեկ հատ տուփում N100թեսթ : Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:	հատ	50	5000	100	ք.Գյումրի, Սարուխան նյան1		100		
23	33211260/2	Հակաստրեպտոլիզին-O Anti Streptolysina-O /Հակաստրեպտոլիզին -O որոշման թեսթ-հավաքածու ԱՍԼՕ/		Քիմիական ազդանյութեր (ռեագենտներ)ԱՍԼՕ որոշման համար նախատեսված հավաքածու - Մեթոդ ագլյուտինացիա: Ֆորմատ N100թեսթ+ստանդարտ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ, պլազմա: : Հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ	հատ	50	5000	100	ք.Գյումրի, Սարուխան նյան1		100		

				օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:									
24	33211310/2	Թրոմբոպլաստինի որոշման թեսթ-հավաքածու		Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված հավաքածու TG: Մեթոդ կոլորոմետրիկ եղանակով՝ պրոթրոմբինային ժամանակի ավտոմատ որոշում : Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը՝ ոչ պակաս քան 30թեստ և ոչ ավել քան 100թեստ + ստանդարտ : Ստուգվող նմուշ՝արյան շիճուկ, ցիտրատային պլազմա: Թրոմբոպլաստինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը ՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	15	4500	300	ք.Գյումրի, Սարուխա նյան1		300		

				կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:									
25	33211410/2	Ասպարտամինոտրանսֆերազ թեսթ /ԱՍԱՏ/		ԱՍԱՏ-ի որոշման համար նախատեսված հավաքածու ASAT: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ՝ ոչ պակաս քան 30թեստ և ոչ ավել քան 100թեստ +ստանդարտ : ԱՍԱՏ-ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը ՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք:	հատ	36	3600	100	ք.Գյումրի, Սարուխա նյան1		100		
26	33211420/2	Ալանինամինոտրանսֆերալ թեսթ / ԱԼԱՏ/		ԱԼԱՏ- որոշման համար նախատեսված հավաքածու ALAT: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը ՝ ոչ պակաս քան 30թեստ և ոչ ավել քան 100թեստ +ստանդարտ : ԱԼԱՏ-ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը ՝ կալիբրատոր, ստանդարտ և այլ անհրաժեշտ նյութեր: Մատակարարը	հատ	39	3900	100	ք.Գյումրի, Սարուխա նյան1		100		

				պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք									
27	33211320/1	Հեպատիտ B վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեսթ-հավաքածու		Հեպատիտ B վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեսթ-հավաքածու	հատ	300	15000	50	ք.Գյումրի, Սարուխանյան1		50		

Ծանոթություն*

ա. 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. Մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը,

Եթե Պայմանագրի թիվ 1 հավելվածում (տեխնիկական բնութագրում) նշված դեղերը պահանջում են պահպանման և տեղափոխման հատուկ ջերմային, խոնավության ռեժիմներ կամ պայմաններ՝ ապա այդ պայմանները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» N 17-Ն հրամանի պահանջներին:

ԳՆՈՐԴ

<< Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն >> ՓԲԸ
հասցե ք.Գյումրի,Սարուխանյան 1

հեռախոս /312/5 -65- 17

էլ.հասցե c-familymedicine@mail.ru

ՀՎՀՀ 05500891

ՎԱՃԱՌՈՂ

<<Կենդանի Լույս >>ՍՊԸ

Ք. Գյումրի, Աթաբեկյան 139տ.

Հեռ. (0312 5 -31-01 , 093 – 955 -669)
էլ. Հասցեն artur.ivanyan.71@mail.ru
ՀՎՀՀ 05534453

«Ինեկոբանկ» ՓԲԸ, Գյումրի մ/ճ

Հ/Հ163128117617 Հայէկոնամբանկի

Գյումրու մ/ճ

Տնօրեն Ա.Անատրյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հ/Հ 2050122037121001

Տնօրեն Ա. Իվանյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 2
<< __28__ >> ___03___ 2019 թ. կնքված
ՇՄԳԸԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ 2019-6-3 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
11	Մեդիասքրին MediScreen 10/Մեզի մեջ գլյուկոզի, արյան, սպիտակուցի, pH, կետոնների, տեսակարար կշռի, նիտրիտների, լեյկոցիտների, ուռոլոբինիգենի – բիլիռուբինի որոշման թեսթ ստրիպների հավաքածու					40000								40000
12	գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու					11500								11500
13	Խոլոստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ - հավաքածու/					52500								52500
14	Բիլիռուբին Bilirubin /Ընդհանուր –ուղղակի բիլիռուբինի որոշման թեսթ-հավաքածու/					6000								6000
15	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ-հաավաքածու					16800								16800
16	Կրեատինին CREA-Col /Կրեատինինի որոշման թեսթ-հավաքածու					2800								2800
17	Ցոլիկլոն անտի-A /արյան խմբի II որոշման թեսթ/					1000								1000
18	Ցոլիկլոն անտի-B/արյան խմբի III որոշման թեսթ/					1000								1000
19	Ցոլիկլոն անտի- Սուպեր / rh D ռեզուս համակարգի անտիգենի որոշման թեսթ					2250								2250
20	ՌՊՌ-Կարբոն RPR CARBON /Սիֆիլիսի որոշման թեսթ-հավաքածու/					35100								35100
21	Ռ–մատոիդ ֆակտոր Լատեքս Rematuoid factor-lex /Ռ–մատոիդային ֆակտորների որոշման թեսթ-հավաքածու/					4750								4750

22	U-ռեակտիվ պրոտեին-լատեքս C-Reactiv Protein-lex /C-ռեակտիվ սպիտակուցի որոշման թեսթ-հավաքածու/					5000								5000
23	Հակաստրեպտոլոիզին-O Anti Streptolysina-O /Հակաստրեպտոլիզին -O որոշման թեսթ-հավաքածու ԱՍԼՕ/					5000								5000
24	Թրոմբոպլաստինի որոշման թեսթ-հավաքածու					4500								4500
25	Ասպարտամինոտրանսֆերազ թեսթ /ԱՍԱՏ/					3600								3600
26	Ալանինամինոտրանսֆերալ թեսթ / ԱԼԱՏ/					3900								3900
27	Հեպատիտ B վիրուսի անտիգենի որակական հայտնաբերման թեսթ-հավաքածու					15000								15000

ԳՆՈՐԴ

<< Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն >> ՓԲԸ
հասցե ք.Գյումրի,Սարուխանյան 1

հեռախոս /312/5 -65- 17

էլ.հասցե c-familymedicine@mail.ru

ՀՎՀՀ 05500891

Հ/Հ163128117617 Հայէկոնամբանկի

Գյումրու մ/ճ

Տնօրեն Ա.Ասատրյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Կենդանի Լույս >>ՍՊԸ

Ք. Գյումրի, Աթաբեկյան 139տ.

Հեռ. (0312 5 -31-01 , 093 – 955 -669)
էլ. Հասցեն artur.ivanyan.71@mail.ru
ՀՎՀՀ 05534453

«Ինեկորանկ» ՓԲԸ, Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122037121001

Տնօրեն Ա. Իվանյան

/ստորագրություն/

Կ.Տ